



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Բ Ջ Պ Ե Տ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<14>> մարտ 2017թ
ք. Եղեգնաձոր

N 30

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Բ Ջ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ջ Մ Ի Կ Ա Ռ Ա Վ Ա Բ Մ Ա Ն Բ Ա Ժ Ն Ի
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՒ Մ Փ Ո Փ ՈՒ Խ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Բ Կ Ա Տ Ա Բ Ե Լ ՈՒ Մ Ա Մ Ի Ն**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի ««Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Վայոց ձորի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1794-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 30-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-104-Ն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N8 որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ բաժնի 5-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ժա) ենթակետից հանել « քաղաքացիական ծառայողների ատեստավորման» բառերը:
2. Ժբ) ենթակետից հանել «, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման» բառերը:
3. Ժդ) ենթակետից հանել «, ինչպես նաև Աշխատակազմի առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման» և «և ատեստավորման» բառերը:
4. Ուժը կորցրած ճանաչել ժ) և ժգ) ենթակետերը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից:



[Handwritten signature]

Հ.ՄԱՐԳՍՅԱՆ